

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒ ԳՈՐԾԵՐՈՒ ԽՈՐՃՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ

## Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Զերդ Սրբութիւն,

Պատիւէ Աւճմ Հայաստանի կառավարութեան առընթեր Հայ Նկեղցու գործերի խօրհրդի և անձամբ իմ կազմից շնորհաւորելու Ձեզ, Զերդ Վեհափառութիւն, Զեր բազմարեզան զահակարութեան տասերորդ տարեդարձի առիքով:

Բազմաւ տասնամեակներ եւ տասնեակ հարիւրամեակներ են անցել Հայ ժողովրդի գլխից: Եղել են վշտի, տառապարքի, պանդխուռութեան տասնամեակներ, եղել են մաքառմաք ու պայքարի տասնեակ տարիներ եւ եղել են յաղթանակի ու ցնծութեան տասնամեակներ: Ցնտագար հայեացք ձգեն վերջին ենթակ տասնամեակների վրայ: Այդ յիստն տարիները, ինչպէս մի կարի ջրի մէջ, արտացոլում են մեր ժողովրդի կեանքի ու պատմութեան բնութագրական էութիւնը:

Այդ յիստն տարիների առաջին տասնամեակը՝

Խարազան ու մահ, Տէր-Զօր ու մահ, նիրառ ու մահ, եւ այնուենուն, մահից մազապարծ, բյոնք օտար երկինքների տակ, պայքար ու մաքառում մարդկային գոյաւթիւնը պահպանելու համար: Այսպէս էր այն Հայութեան համար, որը պատմութեան գծինեմ խաղող դժբախտութիւնն ունեցաւ սփիւր-ժահայութիւն կազումիւ:

Մայր եղանի վրայ, սակայն, այդ տասնամեակի երկրորդ կէսին, ծնուեց մեր նոր պետականութիւնը, Սովետական Հայաստանի Հանրապետութիւնը, որը սկսեց կազել ժողովրդի վերքերը, յոյս տալ բրան' ապրելու եւ յաղթանակները:

Այդ յիստն տարիների երկրորդ, երրորդ, չորրորդ տասնամեակները՝

Սփիւրք մտքառում է, մաքառում՝ արդէն ազգային գոյաւթիւնը պահպանելու համար, ոտեղում հոգեւոր հերտական մշակոյք, որպէս կոռուան այդ մաքառմատ մէջ: Հիմնական կռուամը, տակայն, կոփում է Մայր Հայութիւնում, կոփում է օրէ օր հառակ նետող հօրագոյն գործարանների հուրայում, կոփում՝ արեւները երկինքն ի վեր շարտող Հայ զիտնականների մտքի երդենի մէջ, ձաւլում՝ մեր ծագող մշակոյքի յարահօսում նեկտարի շաղախով:

Ճիշդ ենթակ տասնամեակ առաջ արիւմախում քշնամբ յոխօրտում էր թէ յիստն տարի յետայ Հայ չի լինի աշխարհիս երեսին: Այսօր մենիք կամք, կանգուն ենք մեր հայրենիքի հոգի վրայ ամրապինդ, ներանած, կանգուն ե՞՞ն նաև Սփիւրում: Են, իմշակ երբեք, սերտացել են Սփիւրքն ու Հայրենիքը, մէկ սիրտ, մէկ մարմին, մէկ յոյզ' հօգը տեսնելու երկիրը մեր, Սովետական Հայաստանը՝ Հայ ժողովրդի փրկութեան միակ պատուարը:

Զերդ Սրբութիւն.

Թուարկածս տասնամեակներից հինգերորդը համընկաւ Զերդ Սրբութեան զահակարութեան տարիներին, որպէս Հայ Նկեղցու Գերազայն Պետի: Այդ տասնամեակի ընթացքում Դուք Ձեր կարելին արեցիք՝ նուիրաբերելու համար Հայաստանեայց Նկեղցուն եւ անձնապէս Ձեր բոլոր ուժերը խաղաղութեան պաշտպանութեան սրբազն գործին:

Ինչո՞ւ շեշտել այդ, կարող են հարցնել:

Խաղաղութեամ դատը պաշտպանելով, Դուք եւ Ձեր զլյաւորած նկեղին մեծագոյն ծառայութիւն էք մատուցում ոչ միայն ամբողջ մարդկութեանը, այլև մասմառապէս մեր Մայր Հայրենիքին, մեր հերոսական Հայ ժողովրդին:

Մեր հիմաւուրց երկիրը վերաշինող Հայ ժողովուրդը խաղաղութիւն է սույնում, որովհետեւ տեսական խաղաղութեաց մէջ՝ միայն կարող է արդիւմաւեալ պողաբերել երա շինարար հանճարը, մինչեւ լիակատար յանթական աւարտի հասցնել ահա շուրջ հինգ տասնամյակ կառուցուող շէնքը:

Սիմիւքի բայրերին ու եղայրերին իր յարկի տակ առնելու ձգուող Մայր Երկիր խաղաղութիւն է ուզում՝ մինչեւ վերջ եւ մինչեւ վերջին մարդը սպիտակ շարդի Ապրիլ Քսանչորսեան սպանակիցից փրկելու համար:

Իր փոքր քիւը ունեցնելու, մեր բացցրիկ մանուկների դէմքին ժպիտը մշտապէս կարիքածել տալու համար է, ահա, որ Հայ ժողովուրդը խաղաղութիւն է ուզում:

Դուք, Ձերդ Սրբուրին, Ձեր այդ բարձր դիրքի մէջ, տասը տարի շարունակ, եղաք անխոնց զինուորը խաղաղութեաց բանակի:

Երկէ էր զեռ, իր Ձեր ձայնը բարձր հնչեց խաղաղութեան վերջին, Հելսինկեան Համաժողովին, պահանջելով եւ գործնական առաջարկներ անելով ամրապին խաղաղութիւն հստատելու համար: Նյոյն Հելսինկեան Համաժողովն էր, որ միամյանութեամբ ընդունած իր որոշումների մէջ դատապարտեց Հայ ժողովրդի նկատմամբ գործադրուած ցեղասպանութիւնը յիսուն տարիներ առաջ:

Նկատի ունենալով եւ ըստ արժանայի զինահատելով Ձեր գործունելութեան այդ համամարկային կողմը, մեր Մայր Հայրենիքի գերագոյն իշխանութիւնը Ձեզ պարզեւասրը է իր բարձրագոյն պարգեւով՝ Հայաստանի Սովորական Սոցիալիստական Համբառադտութեան Գերագոյն Սովետի պատուալ:

Ընդունեցէք, խնդրեմ, Ձերդ Վեհափառութիւն, Խորիդիս եւ իմ սըրտագին շնորհաւորած նմուները նաեւ այս առքի:

Տասնամյակներ շատ են անցել մեր ժողովրդի գլխից, բայց ոչ մի տասնամյակում այնպէս անհակտելի չի եղել կազմը Մայր Հայրենիքի ու Սիմիւքի միջնորդ, ինչպէս վերջին տասնամյակում: Մայր Արտ Ս. Էջմիածինը եւ երա Գանձկալը այսուղ էլ ունեցան իրենց արժանաւոր ներդրումը: Արտասահմանի թեմերին տուած Ձեր բացմարդի այցելութիւններով, Ձեր հայրենաշունչ Խօսքով, Դուք մեծապէս նպաստեցի՞ որպէսզի սիմիւքահայութիւնը օրաւոր համախմբուի Մայր Արտոի եւ Մայր Հայաստանի շուրջ, առնի իր ազգային կեցութեան անմար կրակը այնտեղից ու տարածի շուրջը, խաւարի ու ազգային հոսանքի դէմ մաքանելով:

Թոյլ տուէք մի անգամ եւս շնորհաւորել Ձեզ այս հանդիսաւոր յօրելեանի առիբով եւ խաղաղութիւն ցանկալ ու յաջողութիւն՝ Ձեր բերդուն գործունելու մէջ:

#### Կ. ԴԱՎԻԴՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր  
Հայ նկեղեցու գործերի խորհրդի նախագահ «